



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար



Հակոբ Սիմիդյան

«08» 04 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 09.5 - 25

Նախաձեռնող՝

«ԱՐԱՄԵ» ՍՊԸ

ք. Երևան, Ադոնց 6/169

Գործունեությունը՝

Սիսիան համայնքի Իշխանասար բնակավայրում
միջնակարգ դպրոցի կառուցում
Սյունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 09.5 - 25

« 08 » ապրիլի 2025թ.

Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Իշխանասար բնակավայրում միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝

«ԱՐԱՄԵ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
/Բ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Սյունիքի մարզ, Սիսիան համայնք,
Իշխանասար բնակավայր

Ներածական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Իշխանասար բնակավայրում, մոտակա բակելի տնից 86.2 մ հեռավորության վրա: Հայցվող տարածքը կառուցապատված չէ:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8 -րդ կետի ա. ենթակետի:

Նկարագրական մաս. Դպրոցի նոր մասնաշենքերը նախատեսվում է կառուցել ներկայիս դպրոցի շենքից 52 մ հեռավորության վրա: Դպրոցի շենքը նախատեսված 144 աշակերտի համար, բաղկացած է երկհարկ հիմնական դպրոցի մասնաանաշենքից և միահարկ հանդիսությունների և մարզադահլիճի մասնաանաշենքերից:

Գործունեության իրականացման տարածքի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

հողամասի ընդհանուր մակարեսը՝ 12100 մ²,

կառուցապատման մակերեսը՝ 1623.2 մ²,

շենքի ընդհանուր մակերեսը՝ 1557.1 մ²,

կրթահամալիրի ընդհանուր մակերեսը՝ 2069.80 մ²,

կանաչապատման մակարեսը՝ 6548.0 մ²

բաց սպորտհրապարակ՝ 971.0 մ²

արևային մարտկոցների կայանի հզորությունը՝ 149.6 ԿՎտ



Երևանի տրապորմատորային ենթակայանի հզորությունը՝ 400 կՎա
մաքրման կայանի հզորությունը՝ 3լ/վրկ

Դպրոցի և մարզադահլիճի մուտքերի մոտ նախատեսված են թեքահարթակներ: Հանդիսությունների դահլիճը նախագծով նախատեսված է 144 նստատեղի համար, իսկ մարզասրահի անտրեստլային հարկի մակարդակում նախատեսված է 60 նստատեղով տրիբունա: Մարզադահլիճի չափերը կազմում են 24.7մx18.0 մ: Նախագծով նախատեսված է նաև 4.0 x 8.0 մ ուսումնական ջերմոց, 26x14 մ, բաց մարզադաշտ, 100 մ երկարություն ունեցող վազքուղի, տնտեսական բաք, ավտոկայանատեղի: Դպրոցի հողամասի ամբողջ տարածքը ցանկապատվելու է:

Առաջին հարկի ռեկրեացիոն հատվածի երկու կողմերում նախատեսված են դասասենյակներ, ճաշարան և սանհանգույցներ, իսկ երկրորդ հարկում՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի, մեթոդ միավորման, ռազմագիտության, ռոբոտատեխնիկայի դասասենյակներ, ուսուցչանոց և սանհանգույցներ:

Դպրոցի մասնաշենքում նախատեսված է նկուղային հարկ՝ 21.6x20.4 մ չափսերով, որն օգտագործվելու է որպես թաքստոց, ինչպես նաև գրադարան, խոհանոց, բուժկետ, պահոցներ, սանհանգույցներ, էլեկտրովահանակ, ջրի ռեզերվուար, կաթսայատուն և կոյուղու պոմպակայան:

Գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ դպրոցական բացօթյա միջոցառումների համար:

Դպրոցի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվելու են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստրուկցիաներ, մետաղական կոնստրուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Դպրոցի շենքի ճակատի խարսխային մասը նախատեսված է երեսապատել բազալտե սալերով:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Դպրոցի ջրամատակարարման համակարգի սնուցումը նախատեսվում է իրականացնել համայնքային ցանցից: Առաջին հարկում նախատեսված են ռեզերվուարներ խմելու ջրի և հրդեհամարման կարիքների համար, յուրաքանչյուրը 10.0 մ³ ծավալով: Ռեզերվուարներից ջուրը պոմպերի միջոցով տրվելու է ջրամատակարարման և հրդեհամարման ցանցին:

Նախատեսված է 4 պոմպերից բաղկացած խմելու ջրի պոմպակայան, պոմպերից 2-ն աշխատելու են ջրամատակարարման կարիքների համար, մյուս 2-ը միանալու են հրդեհի դեպքում:

Ջրամատակարարման ներքին ցանցը և տանիքում տեղակայված կաթսայատնից սնվող տաք ջրամատակարարման համակարգը նախատեսված են աղիապրոպիլենային PPR PN10 խողովակներից: Բոլոր խողովակները ջերմամեկուսացված են 10 մմ հաստությամբ ռետինե խողովակներով: Ջեռուցումը նախատեսված է էլեկտրական լույսային ռադիատորներով:



բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հաշվետվությունում ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
3. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Սիսիանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
5. Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրահեռացման համակարգին:
6. Կառուցապատման աշխատանքների ժամանակ, պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
7. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՐԱՄԵ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Իշխանասար բնակավայրում միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության



գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Գոհար Մինասյան